ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔԸ՝ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

01.06.2026

Սիրելի՛ երեխաներ

Հունիսի 1-ը ձեր ժպիտների, երազանքների և իրավունքների մասին ևս մեկ անգամ բարձրաձայնելու օր է, քանզի այդ ամենի համար ամեն օր ենք պարտավոր պատասխանատու լինել:
Չափազանց կարևոր է, որ յուրաքանչյուր երեխա մեծանա սիրո և հոգատարության անվտանգ միջավայրում, ունենա կրթվելու, զարգանալու և իր ներուժն ամբողջությամբ բացահայտելու հնարավորություն:
Մեր այսօրվա բոլոր ջանքերն ու որոշումները մեկ նպատակ ունեն՝ կառուցել խաղաղ ու արժանապատիվ ապագա ձեզ համար:
Շնորհավորո՛ւմ եմ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օրվա առթիվ, բոլորիդ անհոգ մանկություն, առողջություն և երջանիկ օրեր եմ մաղթում ու նաև վերահաստատում մեր հաստատակամ հանձնառությունը՝ կերտելու ապահով, կայուն և խաղաղ միջավայր, որտեղ մեր փոքրիկները կկարողանան անվախ երազել, սովորել ու բացահայտել իրենց տաղանդները:
Հե՛նց մանուկների աչքերում է երևում այն Հայաստանը, որը պարտավոր ենք կառուցել: